ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
04 հունիսի 2019 թվականի N 133-Ա

ՌԱԶՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵՎ ՍԱՐԻԿ ԱՂԱԲԵԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն և 2018թ. N1239-Ն որոշումներով հաստատված կարգերով՝

կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ռազմիկ Ավետիսյանին, մարզպետի տեղակալի օգնական Ավետիք Ավետիսյանին և տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Սարիկ Աղաբեկյանին 1 օրով՝ 2019թ. հունիսի 4-ին գործուղել Մեղրի համայնք՝ «Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում ճանապարհաշինարարների կողմից կատարած աշխատանքների որակն ուսումնասիրելու նպատակով:

2.Մարզպետարանի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ իրեն ամրակցված ԳԱԶ 3102 մակնիշի 888 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

4. Ռ.Ավետիսյանին և Ս. Աղաբեկյանին գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. հունիսի 04

04.06.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано POGHOSYAN HUNAN 4005640117